ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /հունվար-օգոստոս/

ՀՀ 2022 թ. պետական բյուջեի ծախսերի կազմը, հունվար-օգոստոս /մլրդ դրամ/







Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), հունվար-օգոստոս, մլրդ դրամ



ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի ծախսերը հունվար-օգոստոսին կազմել են 1 տրիլիոն 258.2 մլրդ դրամ, որն ինն ամիսների ճշտված ցուցանիշի 74.4 %-ն է: Ընդ որում, փաստացի բյուջետային ծախսերի՝

- 31.6 %-ը կամ 397.4 մլրդ դրամը տրամադրվել է սոցիալական պաշտպանության ոլորտին, որը կազմում է ոլորտի ինն ամիսների ճշտված ցուցանիշի 86.3 %-ը,
- 18.2 %-ը կամ 228.6 մլրդ դրամը տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Այն կազմում է ոլորտի ինն ամիսների ճշտված ցուցանիշի 75.5 %-ը,
- 17.8 %-ը կամ 224.3 մլրդ դրամը տրամադրվել է պաշտպանության բնագավառին, որը կազմում է ինն ամիսների ճշտված ցուցանիշի 73.5 %-ը,
- 9 %-ը կամ 113.8 մլրդ դրամը տրամադրվել է հասարակական կարգ,անվտանգություն և դատական գործունեություն բնագավառին, որն ինն ամիսների ճշտված ցուցանիշի 77.5 %-ն է,
- 8.1 %-ը կամ 101.7 մլրդ դրամը տրամադրվել է կրթությանը: Կատարողականն ինն ամսվա ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 75.5 %,
- 6.5%-ը կամ 82 մլրդ դրամը տրամադրվել է առողջապահությանը, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 80.3 %-ը,
- 6.4%-ը կամ 81 մլրդ դրամը տրամադրվել է տնտեսական հարաբերություններ բնագավառին: Կատարողականն ինն ամսվա ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 42.6 %,
- 1.7 %-ը կամ 21.3 մլրդ դրամը տրամադրվել է հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին, որն ինն ամսվա ճշտված ցուցանիշի 79.6 %-ն է,
- 0.4 %-ը կամ 4.6 մլրդ դրամը տրամադրվել է բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ բնագավառին, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 37.1 %-ը,
- շուրջ 0.3 %-ը կամ 3.4 մլրդ դրամը տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը, որը կազմում է ոլորտի ինն ամսվա ճշտված ցուցանիշի 45.3 %-ը:

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) հունվար-օգոստոս ամիսներին կազմել են 151.5 մլրդ դրամ, որը կազմում է ինն ամսվա ճշտված ցուցանիշի 50.3 %-ը:

* Տեղեկատվության աղբյուր է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության <<LS Rep>> համակարգը /12.09.2022թ. դրությամբ/